ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Վեհափառ Հայրապետի հրամանով և օրհնութեամբ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի վարչութիւնն այսու հրաւիրում է բարեպաշտ ազգայիններին կամաւոր նուէրներով օգնութեան հասնելու ճեմարանիս հանգուցեալ ուսուցչի՝ Վարդան Խաչատրեան Արովեանցի հինգ մատղահաս որբերին, որոնք իրենց մօր հետ միասին մեծապէս կարօտ են հասարակաց խնամքին և օժանդակութեանը, զրկուելով իրենց ծնողից և խնամողից։

Նուէրները կարելի է ուղարկել ճեմարանիս վարչութեանը՝ հանգուցեալ Արովեանցի որբերի, ազգիս անդրանիկ վիպասանի թոռների անունով մի գումար կազմելու և նորա տոկոսիքով նոցա սննդեան և դաստիարակութեան պէտքերն հոգալու համար։

Արարատ ամսագրի էջերում պարբերաբար կը հրատարակուի ի գիտութիւն հասարակութեան բոլոր օժանդակութիւնների հաշիւը նուիրատուների անուանական ցանկի հետ միասին։

Աչքի առաջ ունենալով, որ հանգուցեալ Վարդան Արովեանն երեսուն և հինգ տարի շարունակ մանկավարժական ասպարէզի մէջ լինելով, միշտ ազնիւ և բարեխիղճ պաշտօնեայ է եղել թէ զանազան ծխական ուսումնարաններում և թէ 1876 թուից մինչև օրս շարունակ Հոգևոր Ճեմարանում և Երևանի Թեմական դպրանոցում, վարչութիւնս մեծայոյս է, որ բարեպաշտ ազգայինք չպիտի զլանան իրենց լուման՝ մի բազմամեայ և բազմավաստակ հայ ուսուցչի որբացեալ ընտանեաց վիճակն ըստ արժանւոյն ապահովելու համար։

Տեսուչ Ճեմարանի Կ. Կոստանեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ՓՈՔՐԱԿԱԶՄ և ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑ 1897 Թ.
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ԵՒ
ԱՅԼ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ.
ԳԻՆՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ
20 կոպ.

Վաճառւում է Տփխիսում՝ «Կենդրոնական» եւ «Արարատ» գրավաճառանոցներում. Բագւում՝ Ալ. Ծիրազեանցի գրավաճառանոցում. վիճակային կոնսիստորիաներում եւ հոգեւոր կառավարութիւններում: Մեծ քանակութեամբ գնողին 20% զիջում կըլինի. պէտք է դիմել Ս. Էջմիածնի տպարանական ժողովին այս հասցէով. Св. Эчміадзинъ. Типографическому комитету.

Խիստ պատասխանատուութեան կենթարկուին այն գործակալները, որոնք նշանակած գնից աւելի գնով կը վաճառեն:

ԺԵ. ՏԱՐԻ.
„ԱՂԲԻՒՐ"
ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
3 ՊՐԷՄԻԱՆԵՐՈՎ.

Ը. ՏԱՐԻ.
„ՏԱՐԱԶ"
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. 6 Ր.
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮРЪ",—„ТАРАЗЪ".

Ժ. ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
„ԱՐԱՔՍ"
Վեցամսեայ.
Բաժանորդագինն է 3 րուբլի.
Իւրաքանչիւր գիրքը արժէ 2 րուբ. 50 կ.
Հասցէն՝ С. Петербургъ, Симеону Гуламирянцу.
St. Pétersbourg, Siméon Goulamiriantz.

„ՄՈՒՐՃ"
ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ.
Տարեկան գինն է 10 ռ.
Հասցէն. Тифлисъ, Въ Редакцію журнала „МУРЧЪ"
Արտասահմանից. Tiflis. Rédaction be la Revue „MOURTCH"